ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Կ-385-21.11.2019-ՊԻ-011/0) և «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Կ-385[1]-21.11.2019-ՊԻ-011/0) օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	Պատգամավոր Սուրեն Գրիգորյան	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում լրացնել «6-րդ մասից հետո բառերը», իսկ «6.1-ին, 6.2-րդ, 6.3-րդ, 6.4-րդ մասերով» բառերը փոխարինել «6.1-6.4-րդ մասերով» բառերով:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	Պատգամավոր Սուրեն Գրիգորյան	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 225.1-ին հոդվածի 6.1-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրությունը պետք է համապատասխանի պայմանագրի կնքման	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		պահին ապահովված իրավունքի առարկայի կազմում ընդգրկվող գույքի նկարագրությանը և հնարավորություն ընձեռի ողջամտորեն նույնականացնել գույքը դրա նկատմամբ բռնագանձում տարածելու պահին:»:			
	Պատգամավոր Սուրեն Գրիգորյան	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 225.1-ին հոդվածի 6.2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. « ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրությամբ պայմանագրում ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրությունից բացի պետք է նաև նշվի պայմանագրի կնքման պահին ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր արժեքը: Պայմանագրի գործողության ընթացքում ապահովված իրավունքի առարկայի կազմը կարող է փոփոխվել, ներառյալ՝ ապահովված իրավունքի առարկայի կազմում ընդգրկվող գույքը կարող է օտարվել պայմանագրով սահմանված՝ ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր արժեքը չնվազելու պայմանով, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի գրավոր համաձայնությամբ:»:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	Պատգամավոր Սուրեն Գրիգորյան	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 225.1-ին հոդվածի 6.3-րդ մասում «սահմանված լինելու դեպքում» բառերից հետո լրացնել «ապահովված իրավունքի առարկայի կազմում ընդգրկվող» բառերը:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:	Ընդունվել է: